

Որակի հռչակագիր Փոստային և սուրհանդակային ծառայություն

Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Փոստային և սուրհանդակային ծառայություն
0.2	Ոլորտը	Տրանսպորտ
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	ՀՀ ՎԿ Տրանսպորտի և կապի վիճակագրության բաժին Բաժնի պետ Գեորգի Թորոսյան Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3 Հեռախոս` + 374 11 582949 Ֆաքս` +374 11 521 921 Էլ. փոստ` torosyan@armstat.am , info@armstat.am
0.4	Նպատակը և պատմությունը	Սպառողներին տրամադրել արդիական տեղեկատվություն փոստային և սուրհանդակային ծառայության (փոստի, նամակների և բացիկների, ծանրոցածրարների և ծանրոցների առաքման, փոստային և սուրհանդակային գործունեությունից ստացված հասույթների (առանց ավելացված արժեքի հարկի) և ծախսերի) վերաբերյալ: Ցուցանիշների հաշվառումն ունի երկար տարիների պատմություն և վարվում է 20-րդ դարի 10-ական թվականներից: Տարիների ընթացքում այն պարբերաբար կատարելագործվել է` միջազգային դասակարգումներին, ցուցանիշների կազմին և այլ չափորոշիչներին համադրելիությունն ապահովելու նկատառումներով:
0.5	Սպառողները և կիրառումը	Վիճակագրական տեղեկատվության հիմնական սպառողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն: Փոստային և սուրհանդակային ծառայության ցուցանիշները կիրառվում են փոստային և սուրհանդակային ծառայությունների բնագավառներում ռազմավարությունների մշակման, մարտավարական խնդիրների լուծման, բիզնես միջավայրի վերլուծության, զարգացման միտումների բացահայտման և այլ նպատակներով:
0.6	Տեղեկությունների աղբյուրները	Ցուցանիշների կազմման հիմնական աղբյուրը վիճակագրական հաշվետվություններով իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ հավաքվող տվյալներն են:

0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» և «Հայաստանի Հանրապետության պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի մասին» ՀՀ օրենքների, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
0.8	Ռեսպոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողների) ծանրաբեռնվածությունը	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:
1 Բովանդակություն		
1.1	Բովանդակության նկարագիրը	<p>Փոստային և սուրհանդակային ծառայությունը ներառում է փոստային և սուրհանդակային առաքումները, փոստային ծառայությունը, սուրհանդակային ծառայությունը և հատուկ կապի ծառայությունը:</p> <p>Փոստային և սուրհանդակային ծառայությունները ներառում են`</p> <ul style="list-style-type: none"> • ազգային փոստի բաժանմունքներից փոստի, ծանրոցների, ծանրոցածրարների (բանդերոլների) փաթեթների հանում, տեսակավորում, բաշխում, տեղավորում և տեղ հասցում, • «ցպահանջ» թղթակցության մշակում, • փոստային նամականիշների, բացիկների, ծրարների վաճառք, • պայմանագրային հիմունքներով պարբերական մամուլի տարածում, • հատուկ կապ և կառավարական սուրհանդակային գործունեություն (ֆելդեգերային ծառայութ- յուններ), • ազգային փոստից բացի այլ կազմակերպությունների կողմից նամակների, ծանրոցների, ծանրոցածրարների (բանդերոլների) հանում, տեղափոխում և տեղ հասցում:
1.2	Վիճակագրական հասկացություններ	<p><i>Հիմնական հասկացություններ</i></p> <p>Փոստային և սուրհանդակային ծառայության ծավալներն որոշվում են ըստ հաղորդակցության առանձին տեսակների` ներհանրապետական և միջազգային, որից Անկախ Պետությունների Համագործակցության երկրներ:</p> <p>Փոստային գործունեությունը փոստային առաքանու, ինչպես նաև դրամական միջոցների փոստային փոխադրությունների ընդունումը, մշակումը, փոխադրումը և հանձնումն ապահովող ծառայություն է, որն իրենից ներկայացնում է տեխնիկական և տրանսպորտային միջոցների միասնական արտադրատեխնոլոգիական համալիր:</p>

Փոստային առաքումը փոստային առաքանու (հասցեագրված նամակագրական թղթակցություն, փոստային ծանրոցներ ու փոստային բեռնարկեր, համապատասխան փաթեթավորումով տպագիր հրատարակություններ) ընդունումը, մշակումը, փոխադրումը և հանձնումն է հասցեատիրոջը:

Փոստային ծառայությունները գործողություն կամ գործունեություն է փոստային առաքանու (բացառությամբ՝ հատուկ առաքանու) ընդունման, մշակման, փոխադրման և հանձնման, ինչպես նաև դրամական միջոցների փոստային փոխադրությունների իրականացման և բաժանորդագրված պարբերականների առաքման գծով:

Սուրհանդակային ծառայությունը փոստային գործունեության տեսակ է, որի դեպքում փոստային առաքանին առաքման ամբողջ ժամանակահատվածում՝ ուղարկողից մինչև հասցեատեր ուղեկցվում է միննույն իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատերի կողմից:

Հատուկ կապի ծառայությունը փոստային գործունեության տեսակ է, որն ապահովում է հատուկ առաքանիների (փոստային առաքանի, որը պարունակում է միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով պահպանվող գաղտնի տեղեկություններ և առարկաներ, թանկարժեք մետաղներ և թանկարժեք քարեր, ինչպես նաև դրանցից պատրաստված զարդեր, Հայաստանի Հանրապետության դրամական նիշեր, տարադրամ, որոնք ուղարկվում կամ ստացվում են իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից) ընդունումը, մշակումը, փոխադրումը և հանձնումը:

Փոստային և սուրհանդակային ցանցի կառուցվածքը և տեխնիկական միջոցները ներառում են փոստատները (չհաշված մերձերկաթուղայինը), մերձերկաթուղային փոստատները, փոստային և սուրհանդակային կապի բաժանմունքները, գործող փոստարկղերը, փոստ- դրամարկղային մեքենաները, երեսպատման- դրոշմակման և դրոշմակող մեքենաները, թերթերի և ամսագրերի կապոցների, ծանրոցների և ծանրոցածրարների տեսակավորման սարքավորումները, նամակատեսակավորման կոմպլեկտները, բոլոր տեսակի կոնվեյերները և փոխադրիչները, այլ տեխնիկական միջոցները:

Ճյուղային ընդգրկունություն

		<p>Փոստային և սուրհանդակային գործունեության վիճակագրական դիտարկումները ներառում են Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի (ՏԳՏՀԴ խմբ. 2)՝ փոխադրումներ և պահեստային տնտեսություն (բաժին H), որտեղ ներառված են ավտոճանապարհային բոլոր փոխադրումները՝ անտառանյութի, կենդանիների, սառեցրած, ծանրաքարշ, կիտվածքով բեռների, ներառյալ ցիստեռններով փոխադրումներն, այդ թվում՝ գյուղացիական տնտեսություններում հավաքված կաթի փոխադրումը, ավտոմոբիլների, աղբի և այլ տարբեր թափոնների (բացառությամբ հավաքման և վերամշակման ծառայությունները), ներառվում է նաև բեռնատար մեքենաների հանձնումը վարձակալության՝ վարորդով կամ օպերատորով, ինչպես նաև փոստային և սուրհանդակային ծառայությունները:</p> <p>Փոստային և սուրհանդակային գործունեության հատվածը ներառում է փոստային և սուրհանդակային գործունեությունը՝ տարբեր քաշի ծանրոցների, փաթեթների, նամակների ընդունումը, փոխադրումը, տեղ հասցնումը: Այստեղ ներառվում է փոստի ազգային օպերատորի և փոստային և սուրհանդակային ծառայություններ մատուցող այլ կազմակերպությունների գործունեությունը:</p> <p>Այս հատվածն ընդգրկում է համակողմանի պայմանագրի հիման վրա իրականացվող փոստային գործունեությունը, ինչպես նաև այլ փոստային և սուրհանդակային գործունեությունները:</p> <p>Այստեղ ներառվում են.</p> <ul style="list-style-type: none"> • փոստի ազգային օպերատորի գործունեությունը՝ համակողմանի պայմանագրի հիման վրա մեկ կամ ավելի օպերատորների կողմից իրականացվող փոստային գործունեությունը: Այն ներառում է նաև ենթակառուցվածքների ծառայությունները, ներառյալ մանրածախ առևտրով զբաղվող կետերի ծառայությունները, սպասարկումը, տեսակավորման և մշակման սարքավորանքի շահագործումը, փոստային առաքանու հավաքումը և փոխադրումը փոստային բաժանմունքներ: Առաքանին ընդգրկում է նամակները, բացիկները, տպագրած նյութերը (թերթեր, պարբերական հրատարակություններ, գովազդային նյութեր և այլն), փաթեթները, ծանրոցները, փաստաթղթերը, ներառվում է նաև համակողմանի պայմանագրով նախատեսված այլ ծառայությունների մատուցումը: • ներքին և միջազգային առաքանու ստացում, փոխադրում, տեղ հասցնում, համակողմանի պայմանագրի հիման վրա գործող
--	--	--

		<p>օպերատորների կողմից, իրենց պատկանող մեկ կամ մի քանի տրանսպորտային միջոցներով, ինչպես նաև հասարակական տրանսպորտով:</p> <ul style="list-style-type: none"> • փոստային նամակների, բացիկների հավաքում փոստարկղերից կամ փոստային բաժանմունքներից: • առաքանու (ներքին և միջազգային) ստացում, տեսակավորում, փոխադրում, տեղ հասցնում՝ այլ կազմակերպությունների կողմից (բացի համընդհանուր պայմանագրի հիման վրա գործող ծառայությունների մատակարարների), իրենց պատկանող մեկ կամ մի քանի տրանսպորտային միջոցներով, ինչպես նաև հասարակական տրանսպորտով: • առաքանու հանձնումը բնակության (գտնվելու) վայրում: <p>Բացառում է փոստային համակարգում իրականացվող փոխադրագրահաշվարկը, դրամարկղային ծառայությունները և անկանխիկ դրամափոխանցումները, ինչպես նաև տարբեր տրանսպորտային միջոցներով բեռնափոխադրման ծառայությունները:</p> <p><i>Աշխարհագրական ընդգրկունություն</i></p> <p>Ընդգրկում է Հայաստանի Հանրապետությունը:</p> <p><i>Հրապարակման խմբավորումներ</i></p> <p>Տվյալները հրապարակվում են ըստ հաղորդակցության տեսակների: Տվյալները հրապարակվում են նաև աշխատողների թվաքանակով որոշվող չափերի՝ գերփոքր (մինչև 9 մարդ), փոքր (10-49 մարդ), միջին (50-249 մարդ) և խոշոր (250 և ավել մարդ):</p>
--	--	---

2. Ժամանակայնություն		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Ամսական, եռամսյակային և տարեկան
2.2	Հրապարակման ամսաթիվը	Ամսական յուրաժամանակ (օպերատիվ) տվյալները հրապարակվում են հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 20-րդ օրը, ամսական առաջին հրապարակումը՝ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 30/31-րդ օրը, իսկ տարեկան ցուցանիշները՝ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա 4-րդ եռամսյակում:
2.3	Ճշտապահություն	Տվյալները հրապարակվում են տարեկան ծրագրերով հրապարակման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել:

2.4	Հաճախականությունը	Ամսական, եռամսյակային և տարեկան
3 .Ճշգրտություն		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	<p>Ընդհանուր ճշգրտությանն առնչվող կոնկրետ քանակական չափումներ չեն իրականացվում: Հետազոտությունը գլխավորապես հիմնված է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի ընտրանքային դիտարկումների վրա: Հետազոտության մեջ տնտեսավարող սուբյեկտների ընդգրկումը և դրանց կողմից պետական վիճակագրական տեղեկությունների պարտադիր տրամադրումն ամրագրված է վիճակագրության ոլորտը կարգավորող իրավական փաստաթղթերում:</p> <p>Պատասխանների մակարդակը մոտ 98% է:</p>
3.2	Անճշտության աղբյուրները	<p>Տվյալների հավաքումն իրականացվում է համատարած հաշվառման սկզբունքով, որի համար հիմք է հանդիսանում վիճակագրական բիզնես ռեգիստրը:</p> <p>Սահմանված ժամկետում վիճակագրական տվյալների չներկայացման դեպքում կրկնվում են նախորդ ժամանակաշրջանի տվյալները:</p>
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	-
4 .Համադրելիություն		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Մինչև 1998թ.-ը ցուցանիշը ներկայացվել է Ժողովրդական տնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչին (ԺՏՃՀԴ) համապատասխան: 1998- 2001թթ. կիրառվել է Միջազգային ստանդարտ ճյուղային դասակարգչի (ՄՍՃԴ) 3-րդ խմբագրությունը (ՄԱԿ): Սկսած 2002թ.-ից ցուցանիշը ներկայացվում է Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչին համապատասխան (մշակված ԵՄ վիճակագրական ծառայության կողմից հաստատված Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի՝ NACE, հիման վրա): 2010թ.-ից կիրառվում է ՏԳՏՀԴ խմբ.2-ը:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Առկա է համադրելիություն այլ աղբյուրներից ստացվող վիճակագրության (օրինակ՝ կազմակերպությունների տնտեսական գործունեության հետազոտության) հետ:
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	<p>Առաջին անգամ հրապարակված տվյալներն որակվում են նախնական: Հրապարակված տվյալների փոփոխություններն ուղեկցվում են բացատրական ծանոթագրություն ներով:</p> <p>Նախնական տվյալները վերանայվում են տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված ճշգրտումների և այլ ստուգաճշտումների հիման վրա: Վերջնական տվյալները ներկայացվում են տարեկան հրապարակումներում:</p>

5. Մատչելիություն		
5.1	Տարածման ձևաչափ	<p>Ամսական թղթային հրապարակում «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույց (հայերեն) :</p> <p>Ամսական էլեկտրոնային հրապարակում Ինտերնետային հասցե. Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն և անգլերեն, հետևյալ հասցեներով. http://www.armstat.am/am/?nid=82, http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a</p> <p>Նորությունների թողարկում «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող տվյալները հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ» (հայերեն, ռուսերեն, անգլերեն) Տարեկան էլեկտրոնային հրապարակումներ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» (հայերեն, ռուսերեն և անգլերեն): «Հայաստանը թվերով» վիճակագրական ժողովածու (հայերեն և անգլերեն): Այլ</p>
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	<p>Ռեսպոնդենտներից հավաքագրվող պետական վիճակագրական հաշվետվությունները պահպանվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային շտեմարանները ներառում են՝</p> <p>Իրավաբանական անձանց համար. ա/ իրավաբանական անձի ծածկագիրը բ/ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), գ/ պետական ռեզիստորում գրանցման համարը, դ/ իրավաբանական անձի լրիվ անվանումը, ե/ կազմակերպական-իրավական ձևը, զ/ իրավաբանական անձի գտնվելու վայրը (փոստային հասցեն), հեռախոսահամարը, ինչպես նաև հայեցողական կարգով՝ ֆաքսը և էլեկտրոնային փոստի հասցեն, է/ գործունեության հիմնական տեսակը, ը/ արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացումից ստացված զուտ հասույթը (առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի), թ/ աշխատողների միջին ցուցակային թվաքանակը: Անհատ ձեռնարկատերերի համար. ա/ անունը, ազգանունը,</p>

		<p>բ/ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), գ/ պետական ռեգիստրում գրանցման համարը, դ/ պետական գրանցման ամսաթիվը, ե/ բնակության վայրը, զ/ պետական գրանցման վայրը (եթե չի համընկնում բնակության վայրի հետ), հեռախոսահամարը, ինչպես նաև հայեցողական կարգով՝ ֆաքսը և էլեկտրոնային փոստի հասցեն, է/ գործունեության հիմնական տեսակը, ը/ արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացումից ստացված զուտ հասույթը (առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի), թ/ աշխատողների միջին ցուցակային թվաքանակը:</p>
5.3	Այլ տեղեկատվություն	Այլ փաստաթղթավորում առկա չէ:
5.4	Այլ տեղեկատվություն	<p>Փոստային և սուրհանդակային գործունեության հիմնական ցուցանիշների հաշվարկման վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը զետեղված է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2014թ. ապրիլի 7-ի «Փոստային և սուրհանդակային գործունեության մասին» Ձև 1-փոստ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 09-Ն որոշմամբ հաստատված հավելված 2-ում:</p> <p>Մեթոդաբանական պարզաբանումներ են առկա նաև «Հայաստանի վիճակագրական տարեգրքում», «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցների եռամսյակային թողարկումներում:</p>
6. Լրացուցիչ փաստաթղթավորում		
6.1		Լրացուցիչ փաստաթղթավորում առկա չէ: